ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ • ПУБЛИКАЦИИ

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍԻ ՀԵՏ

Ուշ շրջանի հայ-ասորական կապերով, հատկապես եկեղեցական առնչակցություններով զբաղվող մասնագետներին, անտարակույս, կհետաքրքրի XVIII դարի վերջին երկու տասնամյակների հայ նշանավոր հոգևոր և քաղաքական գործիչ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի (1780—1799 թթ.) 1787 թ. հոկտեմբերին գրած մի նամակը՝ հասցեագրված ասորիների կաթողիկոս Մատթեոսին։ Այդ նամակի հետ միաժամանակ շարադրվել է մի կոնդակ, ուղղված «առ ամենայն ազգն մեր վասն օգնութեան առնելոյ Մատթէոս կաթուղիկոսին Ասորւոց»։

Սա առաջին նամակը չէ, որ ուղղել է Ղուկաս Կարնեցին ասորական եկեղեցու վեհափառին։ Դեռևս 1782 թ. ամռանը Մատթեոս կաթողիկոսը էշմիածին եկած ուխտավորների միջոցով Ղուկաս Կարնեցուն նամակ էր ուղարկել, որը, դժբախտաբար, չի պահպանվել։ Նրա բողանդակությունը հայտնի է Ղուկասի գրած պատասխան նամակից, շարադրված նույն թվականի օգոստոսի 12-ին, որից տեղեկանում ենք ասորական կաթողիկոսական աթոռի շուրջ ծավալված կատաղի պայքարի մասին։ Այդ նամակն ամբողջությամբ հրատարակել է Գյուտ Աղանյանցը 1899 թ.[1]։

Մահացել էր ասորիների կաթողիկոսը և օրինական կարգով ընտրվել էր նոր կաթողիկոս՝ Մատթեոսը, որը պետք է օծվեր Մերտինում, ասորվոց եկեղեցու աթոռանիստում։ Բայց գործին խառնվում են հավատուրաց (ախթարմա-կաթոլիկ) ասորի հոգևորականները և այն բավականին բարդանում է։ «Մի ոմն ախթարմայ սուտ վարդապետ,— կարդում ենք նամակում,— յազգէ իւրեանց՝ Միխայէլ անուամբ», որը մինչ այդ Հալեպում, Նինվեում և շատ այլ տեղերում զբաղվել էր կաթոլիկության տարածմամբ, «զեկեղեցիսն յափշտակեալ» եկել էր Մերտին և, կաշառելով տեղի իշխողին, ցանկացել էր սպանել տալ նորընտիր կաթողիկոսին։ Վերջինս կարողացել էր փախչել լեռները, հավաքել իրենց ազգի ուղղափառ եպիսկոպոսներին և օծվել որպես ասորվոց կաթողիկոս։ Ախթարմա ասորիները շարունակել էին իրենց քայքայիչ գործունեությունը ավելի եռանդուն թափով և երբ Մատթեոսը օգնություն ստանալու հույսով դիմել էր Ամիդ, նրանք կարողացել էին այնտեղի փաշային իրենց կողմը գրավել և վերջինս նորընծա կաթողիկոսին ստիպել էր շեղումներ կատարել իրենց հավատից. «Եւ զնոյն տեղւոյ փաշայն ի կողմն իւրեանց արկեալ ճնշեալ էին զսա յոյժ. մինչ զի՝ բռնութեամբ փաշային զսուրբ Աստուածն առանց խաչեցարի ասել էին տուեալ ուղղափառ ասորոցն»[2]։ Մատթեոս կաթողիկոսը բողոքել էր Կ. Պոլսի հայերին՝ պատրիարքին, իշխաններին և մեծամեծներին, բայց սրանք ոչնչով չէին կարողացել օգնել նրան։ Նամակ էր գրել նաև ամենայն հայոց կաթողիկոսին, խնդրելով «օգնել ինքեան, բազում աղերսանօք և կսկծմամբ»։ Ղուկաս Կարնեցին անմիջապես արձագանքել էր նրան և շնորհավորելով կաթողիկոսությունը, խոստացել հետևյալը՝ «...թէ դրելոց եմ ի մեծն Պոլիս առ մերայինսն օգնել քեզ և աղդիդ քոյ»[3]։ Ղուկաս Կարնեցին այդ նամակում Մատթեոսին՝ «սրբազնակատար կաթողիկոսիդ և ծայրագոյն պատրիարքիդ ամենայն տսորոց, սիրեցելոյ և բաղձալոյ եղբօրդ մերոյ ի Քրիստոս՝ արժանապատւոյ և գերյարգելւոյ... սիրողիս ազգիս մերոյ և Աստուածէջ Աթոռոյս հայտնում է իր վշտակցությունը պատահած աղետի համար, «զորս կրէք ի շարաթառաց՝ յաղագս ճրշմարիտ հաւատոյ սրբոյ և ուղղափառ դաւանութեան որ առ մարդեղութիւն Քրիստոսին»։ Ղուկասը եղածի մասին տեղեկացել էր ոչ միայն Մատթեոսի նամակից, այլև նրա գրաբեր ուխտավորներից. «Եւ զի զերկարապէսն ասացելոցս ի գրաբեր ուխտաւորացս իմացաք լրիւ և ծանեաք զամենայն վիշտս և զնեղութիւնս ձեր վասն որոյ՝ յոյժ առաւել վշտացաք ի սիրտ և ի հոգի, և ցաւեցաք վասն ձեր»[4]։

---

1 Դիւան հայոց պատմութեան. գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 413—417։

2 Նույն տեղում, էջ 413—414։

3 Նույն տեղում, էջ 414։

4 Նույն տեղում, էջ 415։

Մինչ ուխտավորները պատրաստվում էին մեկնել էջմիածնից, Ղուկաս Կարնեցին գրում է նամակներ՝ ուղղված Կ. Պոլսի պատրիարքին և իշխաններին՝ «որպէս զի օգնեսցեն ձեզ. և հոգ տարցեն բանից ձերոց, զոր ինչ եւ գրեալ իցէք կամ յայսմհետէ գրիցէք, ի փառս սրբոյ Հաւատոյս մերոյ»։ Եվ այդ նամակները «զկնի սակաւ աւուրց յղելոց եմք ի մեծն Պոլիս։ Այսպէս զիտասցես և լիցիս միամիտ»։

Վերջում Ղուկասը ողջույններ է հղում Մատթեոսի կողմնակիցներին՝ «Պշառայ արժանավայել Պատրիարքին սրբոյ Երուսաղէմի։ Նուն Իբրահիմ, Սահրթ, Ապլահաթ, Էլիազ, Իբրահիմ, և Ապալաղիղ արժանապատիւ Եպիսկոպոսացն և Եպագուր հանճարափայլ վարդապետին, և այլ ամենայն շնորհազարդ եպիսկոպոսաց և վարդապետաց ընդ ձեռամբ և ընդ հրամանաւ քոմ եղելոց»5։

Ստորև առաջին անգամ հրապարակվող նամակից, որը պատասխանն է ասորի Էլիաս եպիսկոպոսի ձեռքով էջմիածին բերված Մատթեոս կաթողիկոսի նամակի և թվագրված է 1787 թ. հոկտեմբերին, ասվում է, որ ընթերցելով նամակը և տեղեկանալով ասորիների հոգևոր առաջնորդի կրած նեղություններին և տառապանքների մասին, որոնց նա նախապես տեղյակ էր, ուրախ է արձանագրելու, որ իր խնդրանքով Կոստանդնուպոլսի հայերը կարողացել են օգտակար լինել Մատթեոս կաթողիկոսին. «զի վրէժխնդրութեամբ արդարադատին Աստուծոյ և օժանդակութեամբ մերազնէիցն Կոստանդնուպօլսոյ ի մեծազօր թագաւորէն հրաման հանեալ, աքսորեալ տուեալ էիր զչարագլուխն զայն՝ հակառակ քո և ուղղափառ սրբոյ եկեղեցւոյ, և հանդերձ համախոհիւքն և հերձուածողօք ամօթապարտ արարեալ, և զսուրբ զԱթոռդ և զեկեղեցիս թափեալ ի չար աղանդոյ նոցին և ի բռնութենէ»։

Բայց, երևում է, որ այդ ամենը նյութապես էժան չէր նստել ասորի կաթողիկոսի ու նրա կողմնակիցների վրա։ Օսմանյան պետության մեջ ամենուրեք իշխում էր կաշառակերությունը և այն էլ մեծ չափերով։ Պետք էր վարձահատույց լինել ոչ միայն բարձրագույն հրովարտակը ստորագրողին, այլև մեծ ու փոքր աստիճանավորներին, որոնք այս կամ այն չափով առնչվում էին գործի հետ։ Ուստի ասորվոց կաթողիկոսը մեծամեծ պարտքեր էր արել։ Այժմ, դիմելով հայոց եկեղեցու հայրապետին, խնդրում էր շրջաբերական նամակ հղել հայերին՝ հանձնարարելով նյութական օգնություն ցույց տալ իրեն, որպեսզի կարողանա վճարել պարտքերը։

Մինչև ասորի կաթողիկոսի ցանկացած ժողովարարական կոնդակը պատրաստել տալը, Ղուկաս Կարնեցին անհրաժեշտ է համարում գրել նրան «զայս սիրաձիր և միամտական թուղթ»-ը, որը նրա ներկայացուցիչ Մթռան Էլիազ եպիսկոպոսի շարադրած նամակի հետ ուղարկում է նրան, «զի իմացեալ զկատարումն խնդրոյդ, միամիտ և անտարակոյս լիցիս»։

Խնդրված ժողովարարական կոնդակը կաթողիկոսը չէր կարող միանգամից ուղարկել, որովհետև այն պատրաստելու համար որոշակի ժամանակ էր հարկավոր։ Պահպանված նույն բնույթի կոնդակներից երևում է, որ թե՛ մանրանկարիչը և թե՛ արտագրող գրիչը մեծ աշխատանք էին տանում ծավալուն և շքեղ այդօրինակ գրությունների վրա, որին նախորդում էր կաթողիկոսի անմիջական ղեկավարության տակ գործող քարտուղարի աշխատանքը։

Սովորաբար այս դեպքում էլ լայնորեն օգտվում էին նախկինում գրված նույն բովանդակություն ունեցող ժողովարարական կոնդակների սևագրություններից՝ կատարելով համապատասխան հղումներ (օրինակ, այս կոնդակի հիմնական մասը սկսվում է նման հղումով՝ «զսկիզբն տես ի նախկին և փոքրագիրք մասինն տեսրիս ի 282 երեսն, նայելով և աստ ի ներքոյ», կամ՝ քիչ ներքևում՝ «Դարձեալ տես անդ մինչև յայն բառսն, զոր տեսանես ահա ի ներքոյ և ապա եկ աստ։ Այլ անդէն զլուսանցի որուածսն խազիւ կտրեալս թողցես և զայլոն գրեսցես»)։ Եվ դրանով պետք է բացատրել կոնդակի փոքր-ինչ ուշացումը, որը, սակայն, պատրաստվում է, կնքվում և հանձնվում Մթռան Էլիազ եպիսկոպոսին։ Կոնդակի մեջ հանգամանորեն խոսվում է եղբայրական ասորի ժողովրդի եկեղեցու վրա կախված վտանգների մասին և կոչ է արվում նյութական օգնություն ցույց տալ «Ասորւոց, որք են մեզ հաւատակիցք առ ուղիղ դաւանութիւն միաւորեալ մի բնութեանն Քրիստոսի, և սրբոյ Հոգւոյն բղխմանն ի Հօրէ միոյն»։

Կաթողիկոսը պատվիրում է «յօժար սրտիւք և զուարթ երեսօք շնորհեսջիք դմա զկամաւոր տուրս ողորմութեան՝ յանուն բազմավշտակիր և խղճալի Մատթեոս կաթուղիկոսին Ասորւոց և Աթոռոյս Նոցա, զի տարեալ դոքօք վճարեսցեն զպարտս իւրեանց և ազատ լիցին ի ծանրութենէ հոգոց և տարակուսանաց...»։

---

5 Նույն տեղում, էջ 416—417։

Ստորև հրատարակում ենք Ղուկաս Կարնեցու նամակը՝ ուղղված ասորիների կաթողիկոս Մատթեոսին, և ժողովարարական կոնդակը։

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1787 թ. հոկտեմբեր—Թուղթ առ Մատթէոս կաթուղիկոսն Ասորւոց, ի պատասխանի երկրորդ թղթոյ նորա[1], զոր ձեռամբ Էլիազ եպիսկոպոսի, միաբանի իւրոյ[2], գրեալ էր առ սրբազանս մեր և խնդրեալ էր զժողովարարութեան կոնդակ տալ նմա ի վերայ ազգի մերոյ, զի զողորմութիւնս ժողովեալ վասն իւր, հաստուսցէ զծանրագոյն պարտսն, զոր արարեալ էր ի վարել տալն զախթարմայ չկաթուղիկոսն Միխայէլ Հալապցին, յորմէ զբազում վնասս և նեղութիւնս և հալածանս էր կրեալ՝ հանդերձ իւրահետ և ուղղափառօքն, և վերջապէս Պօլսոյ մերագնեայց օգնելովն էր վարել տուեալ զնա։ Եւ սրբազանս մեր զշրջաբերական կոնդակ շնորհեալ, այսու ծանուցանէ նմա զկատարելն իւր զխնդիր նորին[3]։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ ամենայն Հայոց Առաքելական եկեղեցւոյս Քրիստոսի և լուսակառոյց մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի, որ ի Վաղարշապատ։ Որ ահա մատուցանեմ զքրիստոսածիրն ողջոյն՝ հանդերձ եղբայրականաւ ճշմարիտ սիրով և հոգետարփ բաղձանօք և կարօտիւ։

Տեառնդ Մատթէոսի սրբասէր կաթուղիկոսիդ և ծայրագոյն պատրիարգիդ ամենայն Ասորւոց, սիրելի և բաղձալի եղբօրդ իմոյ գերյարգելւոյ։ Հարազատ բարեկամիդ և սիրողիդ ազգի մերոյ և աստուածաէջ սրբոյ Աթոռոյս, ըստ բնականի օրինի և աւանդութեան և կցորդութեան հաւատոյ և սիրոյ երանելի հարց և նախնեացն սրբոց մեր և ձեր, որում և ծանուցումն լիցի։

Զի թուղթ պատուելի եղբայրութեան քոյ ժամանեաց առ մեզ ձեռամբ հարազատ միաբանին քոյ և սիրելւոյն մերոյ՝ Էլիաս հանճարառատ եպիսկոպոսին։ Զոր սիրով ընկալեալ և ընթերցեալ մեր, գիտացաք զնեղութիւնսդ և զտառապանսդ, զոր կրեալ էիր ի չարութենէ մոլորաշաւիղ չարափառ Միխայինէ[4] և նորին համախոհիցն հեստեցելոց՝ որդւոցն կորստեան, զորս և յառաջնմէ իմացեալ էաք։ Ընդ որս և ցաւեցաք յոյժ՝ մորմոքմամբ սրտի։ Բայց ընդ այն, զի վրէժխնդրութեամբ

1147 *արդարադատին // Աստուծոյ և օժանդակութեամբ մերազնէիցն Կոստանդնուպօլսոյ ի մեծազօր թագաւորէն հրաման հանեալ աքսորեալ տուեալ էիր զչարագուխն զայն՝ հակառակ քո և ուղղափառ սրբոյ եկեղեցւոյ, և հանդերձ համախոհիւքն և հերձուածողօք ամօթապարտ արարեալ, և զսուրբ զԱթոռդ և զեկեղեցիս թափեալ ի չար աղանդոյ նոցին և ի բռնութենէ, ուրախացաք մեծապէս և գոհացաք զԱստուծոյ։ Յորմէ և խնդրեմք, զի զամենայն վիշտսդ և զվնասակրութիւնսդ ի յապաշխարանս համարելով, վարձատրեսցէ զսիրելի եղբայրդ մեր, և որպէս այժմ յայսմիկ կենի զառհաւատչեայն յաւիտենական կենացն պարգևեաց, ի հանդերձելումն ևս յերևիլ ինքեան հովուապետին շընորհեսցէ քաջ և արի հովուիդ բարւոյ զանթառամ փառացն պսակ ըստ սրբոյ առաքելոյն յուսատրութեան։ Եւ միշտ զթշնամիսն արդարութեան և զմշակսն անիրաւութեան զհերքեալսն ի սրբոյ եկեղեցւոյ կորագլուխս և ամօթալիս արասցէ, և զբարեջան հայրապետդ պահեսցէ յԱթոռ քո անվրդով և պերճ ի քեզավայելուչդ պատիւ, բարձրացուցանելով զեղջիւր ուղղափառութեան և միաբանադաւան սուրբ հաւատոյ երկուց համաշաւիղ և ճշմարտադաւան ազգացս մեր և ձեր։*

Եւ արդ, քանզի խնդիր էր սիրելի եղբօրդ ի մէնջ դրել զկոնդակ շրջաբերական ի վերայ ազգի մերոյ վասն օգնութիւն առնելոյ քեզ ի հաստուցումն ծանրագոյն պարտուցդ, զոր արարեալ ես վասն եղելոց իրագործութեանցն, և տալ զայն հարազատ և սրտացաւ միաբանին քոյ՝ Էլիազ եպիսկոպոսին, առ ի շրջիլ այնու յազգս մեր և ժողովս առնել, և յօղնութիւն ժամանել քեզ։ Ահա ցաւակցութեամբ եղբայրականաւ օժանդակել կամելով մեր՝ կատարեցաք զխնդիրդ, որովհետև տեղեկացեալ էաք զդիպուածոցդ և զնեղութեանցդ, զորս կրեալ ես և կաս ի ներքոյ դժուարակրելի ծանրութեան պարտուց, ըստ որում ծանուցեալ էիր։

Եւ մինչ զԷլիազ եպիսկոպոսն կոնդակաւն մերով ուղևորէաք, զայս սիրաձիր և միամտական թուղթ ևս գրեցաք առ յարգելի եղբայրդ մեր, և նա ևս զորպիսածանոյց թուղթ մի գրեաց, զորս և ի միասին յղեցաք առ քեզ, զի իմացեալ զկատարումն խնդրոյդ, միամիտ և անտարակոյս լիցիս։ Որ և զճշմարիտ սէրդ հոգևոր եղբայրութեան և զբարեկամութիւնդ ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս մերմէ անպակաս ունիցիս, և ի ձեռն սիրանիշ և որպիսայայտ թղթոյ արծարծեսցես զնոյնս՝ առ ի վըճարումն պարտականութեան մերոյ, որք ի Տեառնէն մերմէ և Փրրկչէն զանչրելի պատուէր ընկալեալ, պարտական եմք սիրել զմիմեանս սրտիւ և ճշմարտիւ սիրով։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի թուոջ Փրկչին 1787 և ի թուոջս հայկական ՌՄԼԶ, ի հոկտեմբերի..., և ի բարձրագոյն Աթոռս ամենայն Հայոց, ի սուրբ Էջմիածին։

(Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 1146—1147)։

[1787 թ. հոկտեմբեր]—Կոնդակ առ ամենայն ազգն մեր վասն օգնութիւն առնելոյ Մատթէոս կաթուղիկոսին Ասորւոց, որ ի հակառակութենէ յինքեանց դարձեալ ախթարմայիցն զսաստիկ տառապանս և զմեծամեծ վնասս էր կրեալ և ի ներքոյ պարտուց անկեալ։ Քանզի ոմն չեպիսկոպոս ի հեստելոցն գլուխ ամբարձեալ հանդերձ համախոհիւքն, ջանայր յինքն գրաւել զԱթոռն նորա և զհայրապետութիւնն։ Իսկ սա, ձեռնտուութեամբ մերազնեայցն կոստանդնուպօլսեցւոց, յայտ առնել ետ թագաւորին Օսմանցւոց, և վարել ետ զնա յԱթոռոյն, և ընկէց յիշխանութենէն, և հազիւ կալաւ զԱթոռն հայրապետութեան Ասորւոց՝ պահելով յուղղափառութեան ի միաբնադաւան հաւատս ի Քրիստոս։ Եւ զի յայսմ իրագործութեան զբազում դրամս ծախելով գոյաթափեալ էր և ընդ պարտուք անկեալ՝ վասն որոյ ի սրբազանէն զշրջաբերական նամակ էր խնդրեալ ի ձեռն Մթռան Էլիազ եպիսկոպոսին իւրոյ, ի վերայ ազգին մերոյ վասն ժողովարարութեան։ Ուստի և սա զայս դրեալ շնորհեաց նոցա[5]։

(Զսկիզբն տե՛ս ի նախկին և փոքրադիրք մասինն տետրիս ի 282 երեսն, նայելով և աստ ի ներքոյ)։

...Որք կայք զետեղեալք ի մայրաքաղաքս, ի քաղաքս, ի գավառս, ի ղասապայս և ի գիւղորայս, ուր և հանդիպեսցի դոյն ունօղդ ի ձեռին զայս օրհնաձիր նամակս մեր։ Յորս կառուցեալ քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց, արհիապանծ Առաջ... (դարձեալ տե՛ս անդ մինչև յայն բառսն, զոր տեսանես ահա ի ներքոյ և ապա եկ աստ։ Այլ անդէն զլուսանցի գրուածսն խազիւ կտրեալս թողցես և զայլսն գրեսցես)։

...Յայսպիսեաց հոգևոր և վարձատրելի գործոց աղագաւ պակասաւորաց և զվիշտս յանձնառողաց մի է սիրելի եղբայրն մեր՝ Մատթէոս սրբասէր և բարեմիտ կաթուղիկոսն միաբնադաւան և ուղղափառ ազգին Ասորւոց, որք են մեզ հաւատակիցք առ ուղիղ դաւանութիւն միաւորեալ մի բնութեանն Քրիստոսի, և սրբոյ Հոգւոյն բղխմանն ի

Հօրէ միայն։ Որոյ զդիպուածն և զաստուածահաճոյ և հասարակաօգուտ աշխատութիւնն և զդժուարակրելի ծանրութիւնս յանձն առնուն ցուցից ձեզ, զի և դուք օժանդակելով և կարեկցելով նմա, մասնակցիցիք նորին հոգեշահ և վարձատրելի գործոց։ Քանզի գիտէք իսկ, զի ի վաղնջուց ժամանակաց վասն մեղաց մերոց շար և հոգեկորոյս ազանդն երկաբնակութեան սպրդեալ մտեալ է ի յազգս միաբնադաւանիցս՝ ի սադրելոյ ամենաչար ոգւոյն մոլորութեան և ի նորին կամարարաց որդւոցն կորստեան, որք ոչ միայն զհոգիս ոմանց ուղղափառաց պատրեալ կորուսանեն ընդ իւրեանց եղկելի հոգւոցն, այլ մարմնաւորապէս ևս վնասեն զնոսա, և օր ըստ օրէ յաւելանին, և յառաջեն ի շար անդր, և յանդգնին ի մեծագոյն իրս ևս ամբառնալ։

Որպէս յանցեալսն ի յԱսորւոց ազգէն հեստեալ հերձուածողքն երկաբնակք ջանս եդեալ կամեցեալ են զՄատթէոս սրբասէր կաթուղիկոսն Ասորւոց ի բաց մերժել յԱթոռոյն, և զԱթոռն և զհայրապետութիւնն յափշտակել. և յինքեանս գրաւել, և զմիաբնադաւան ուղղափառսն նուաճել և ինքեանց հետևեցուցանել։ Որովք չարամտութեամբք և զանչափ վնասս և նեղութիւնս են հասուցեալ խղճալւոյն այնորիկ և միաբանից իւրոց։ Իսկ նա զամենակերպ փորձանս և չարիս կրելով ի հակառակութենէ նոցին, և ևս արիաբար ընդդիմացեալ է նոցա. և ի յայլ կողմանց անօգնական գտանիլն, Կոստանդնուպօլսոյ օրհնեալ մերազնէիցն ձեռնտուութեամբ և օժանդակութեամբ զհրովարտակ է հանել տուեալ յարքունուստ, և զչարագլուխն հակառակաց վարեցուցեալ և զհամախոհս նորին կորագլուխ արարեալ։ Եւ հաղիւ զսուրբ Աթոռս իւրեանց և զխղճալի ժողովուրդն ազատեալ ի նոցունց, և զբազումս ի հեստելոցն ևս դարձուցեալ է վերստին ի յուղղափառութիւն միաբնադաւանութեան, և ի կրօնս եկեղեցւոյ իւրեանց։ Բայց յայսմ իրագործութեան զբաղում դրամս է վատնեալ, թող զանչափ վնասսն, զոր ի չարափառացն կրեալ է։ Եւ ոչ միայն գոյաթափեալ են ինքն և միաբանք իւր, հանդերձ սուրբ Աթոռովն իւրեանց, այլև ի ներքոյ ծանրագոյն և տոկոսաշատ պարտուց ևս են անկեալ։ Որոյ աղագաւ յայլ ուստեքէ օգնութիւն ոչ ունելով առ ի վճարել զայն, սիրոյ և աղերսանաց թուղթ էր գրեալ առ մեզ, ձեռամբ միոյ միաբանի իւրոյ՝ Եղիա անուամբ եպիսկոպոսի (որ ըստ լեզուի իւրեանց Մթռան Էլիազ կոչի), և խնդրեալ էր ի մէնջ զկոնդակ շրջաբերական ի վերայ օրհնեալ ազգիդ մերոյ Հայկազնոյ, առ ի գտանել ի ձէնջ զօգնութիւն ազատութեան
1332 ծանրաբեռն պարտուց իւրեանց։ // Եւ մեր իմացեալ զայնքան տառապակրութիւնսն նորա, ոչ անտես առնելով զաղաչանս նորին, ահա զայս նամակ օրհնութեան դրեալ առ բարեպաշտութիւն ձեր, ետուք ի ձեռս հարազատ միաբանիդ նորին՝ Էլիաս եպիսկոպոսիդ, զի եկեալ խնդրեսցէ ի՝ յողորմածացդ զկամաւոր ողորմութիւնս[8]։

Վասն որոյ պատուիրեմք սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, զի յիշելով զհրաման սրբազան Առաքելոյն Պօղոսի, թէ ոմիցիք զգութ առ ընտանիս հաւատոց, ի գալն դորա առ ձեզ, սիրով ընկալջիք և ի փառս Քրիստոսի Փրկչին մերոյ և ի սէր սրբոյ հաւատոյս մերոյ ուղղափառի, ի գութ շարժեալ և յայց ելեալ, յօժար սրտիւք և զուարթ երեսօք շնորհեսջիք դմա զկամաւոր տուրս ողորմութեան՝ յանուն բազմավրշտակիր և խղճալի Մատթէոս կաթուղիկոսին Ասորւոց և Աթոռոյն նոցա, զի տարեալ դոքօք վճարեսցեն զպարտս իւրեանց և ազատ լիցին ի ծանրութենէ հոգոց և տարակուսանաց, և զուարթութեամբ կացցեն ի սուրբ հաւատս և յուղիղ դաւանութիւնս սրբոյ եկեղեցւոյ, որով հաղորդք եմք իրերաց մեք և նոքա, և աղօթեսցեն առ Աստուած վասն կենաց և բարեյաջողութեան ձերոյ։ Եւ որպէս դուք ձերովք տրօքն պատճառ լինիք ազատութեան նոցա ի պարտուց. ազատարարն Քրիստոս ևս զձեզ ի հոգեկան և ի մարմնական պարտուց փրկեսցէ և ազատես-

ցէ։ Որք և լիշիք օրհնեալք և զօրացեալք ի Տէր միշտ և շնորհք սըր-բոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ յարաժամ։ Ամէն։

(Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 1331—1332)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջին նամակը Մատթեոս կաթողիկոսը գրել է ամենայն հավանականությամբ 1782 թ.։ «Զի սիրածոր թուղթ եղբայրութեան քո առ մեզ ժամանեաց»,— կարդում ենք Ղուկաս Կարնեցու 1782 թ. օգոստոսի 15-ին գրած նամակում (Դիվան հայոց պատմության, գիրք Դ, էջ 414)։

2. Էջմիածնի վանքի մուտքի մատյաններից մեկում 1787 թ. հոկտեմբերի 20-ին արված մի գրանցումից երևում է, որ Էլիաս վարդապետը մի շարք նվերներ էր բերել կաթողիկոսին (Հալեպի և եվրոպական արտադրության հագուստեղեն, գործվածքներ և 12 գլուխ շաքար)։ Ստորև բերում ենք այդ գրանցումը. «Ասորի Էլիազ եպիսկոպոս մի ի Տիգրանակերտու եկեալ այսինչ ընծայ եա. Դ. Հալապի և կէս ֆիլիմանկ շուխայ, Զ. Հալապի խառայ, Ա. կէռմեսուտ, ԺԲ գլուխ շաքեար» (Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 58)։

3. Սովորաբար նամակների շարադրման ժամանակ հատուկ մատյանում գրանցում էին նաև նրանց համառոտ բովանդակությունը (համառոտագրությունը)։ Այս նամակի բովանդա-կությունից, որ ամբողջությամբ հրապարակում ենք ստորև, հայտնի է դառնում նամակի ուղարկման, հետևապես և Մատթեոս կաթողիկոսի գտնվելու վայրը, որը Ամիդ քաղաքն էր։

«[1787 թ. հոկտեմբեր]—Թուղթ յայլ և այլ անգես, ի յԱմիդ—Թուղթ մի առ Մատթէոս կաթուղիկոսն Ասորւոց, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր ընդ Էլիազ եպիսկոպոսին իւ-րոյ, որով և խնդրեալ էր ի սրբազան Վեհէն մերմէ զկոնդակ շրջաբերական ի վերայ հանուր-ազգին մերոյ, որ և սրբազան Վեհն մեր ոչ անտես արարեալ զխնդիրս նորա, գրեցուցեալ զկոնդակ մի եա սոյն Էլիազ եպիսկոպոսին, զի երթեալ ժողովեսցէ ըստ խնդրոյ վերոյ յի-շեալ կաթուղիկոսին իւրեանց։ Եւ զայս թուղթս առ ինքն գրեաց, զի միամտիցի վասն խընդ-րոյն» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 226ա)։

4. Սա Ղուկաս Կարնեցու 1782 թ. օգոստոսի 25-ի նամակում հիշվող Միխայել վարդա-պետն է (տե՛ս Դիվան հայոց պատմության, գիրք Դ, էջ 413)։

5. Կարելի է կարծել, որ կոնդակը ուղղված էր Կոստանդնուպոլսի և շրջակայքի հայ բնակչությանը։ Կոնդակի համառոտագրությունը պահպանված է, որը ամբողջությամբ բե-րում ենք. «Կոնդակ մի վասն ժողովարարութեան առ հանուր ազգն մերոյ, զոր ըստ խնդրոյ Ասորւոց Մատթէոս անուամբ կաթուղիկոսին եառւք նոցին միաբան Էլիազ անուամբ ուրումն, զի այսու ժողովեսցէ զկամաւոր տուրս ազգին մերոյ Հայկազնոյ և լցուսցեն զպակասութիւն իւրեանց» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 226ա)։

Այս (իհարկե և նախորդ) համառոտագրությունը կազմվել է նամակների շարադրումից հետո։ Ամսաթիվը նշված չէ, բայց մյուս գրանցումներից երևում է, որ դա եղել է 1787 թ. հոկտեմբերի վերջերին։

6. Էլիաս եպիսկոպոսին էջմիածնում նվերներ են տվել (ֆարաջա, հնդկական սրբիչներ և արկղիկ)։ Այդ մասին վանքի ելից մատյանում կարդում ենք. «Ասորոց Էլեազ Եպիսկո-պոսին ագուցաք Ա. շալի լաւ ֆարաճայ՝ աթլաս քեօպայով, Բ. հատ հնտու ղումաշ մահրա-մայ և Ա. բաղայ սև ղութի եառւք ի հոկ[տեմբերի] ելն։ Սա իւրեանց Մատթայ կաթուղիկո-սէն թուղթ էր բերեալ և կոնդակ խնդրէր՝ յօգնականութիւն իւրեանց, որ և եա սրբազան Վե-հապետս մեր ըստ խնդրոյ յիշեալ կաթուղիկոսին» (Մաշտոցի անվ. Մատենադարանի արխի-վային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 125)։

ПЕРЕПИСКА ГУКАСА КАРНЕЦИ С КАТОЛИКОСОМ АЙСОРОВ МАТТЕОСОМ

Доктор ист. наук В. Р. ГРИГОРЯН

Резюме

Впервые публикуются письмо видного армянского духовного и политического деятеля последних двух десятилетий XVIII века Гукаса Карнеци (1780—1799 гг.) к католикосу айсоров Маттеосу и кондак к армянскому народу с призывом оказывать материальную помощь Маттеосу. Письмо и кондак были составлены в октябре 1787 г. Еще летом 1782 г. с паломниками, пришедшими в Эчмиадзин, католикос Маттеос послал Гукасу Карнеци письмо, которое, к сожалению, не сохранилось. Его содержание известно по ответному письму Гукаса, где говорится о яростной борьбе, развернувшейся вокруг престола католикоса айсоров. Эти документы свидетельствуют о тяжелом положении, в котором в результате гонений со стороны айсорских священнослужителей оказался Маттеос. С помощью константинопольских армян Гукасу удается дать отпор врагам Маттеоса и укрепить его позиции.